

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
տրանսպորտի և կապի նախարարի
« » 2015թ.
թիվ - հրամանի
«Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
տրանսպորտի և կապի նախարարի
«30» հոկտեմբեր 2012թ.
Թիվ 604-Ն հրամանի

ՁԵՎԱԶԱՓ

**ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ` ԸՍՏ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ՀՄՄ)**

N	ՀՄՄ-ի կոդ	Ցուցանիշ	Սահմանում	2013	2014	2015	Տրամադրման և հրապարակման պատասխանատու մարմին
1. Ֆիքսված հեռախոսակապի ցանց							
1.	112	Ֆիքսված հեռախոսագծեր	Ֆիքսված հեռախոսագիծ նշանակում է անալոգային ֆիքսված հեռախոսագծերի գործող թվի, ՎոԻՓ (VoIP) բաժանորդագրությունների, ֆիքսված անլար կապի (ԴաբլյուԷլԷլ (WLL)) բաժանորդագրությունների, ԱյԵՍԴԻԷՆ (ISDN) ծայնային ալիքների համարժեքի և հանրային վճարովի հեռախոսների գումարը: Այս ցուցանիշը նախկինում անվանվել է Հիմնական գործող հեռախոսագծերը:	578 450	572 772	551 366	«Հ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
2.	112IP	ՎոյՍԿՓի (VoIP) բաժանորդագրությունները	Նշանակում է ինտերնետ արձանագրության ծայնային ծառայության (ՎոԻՓ (VoIP)) ֆիքսված գծի բաժանորդագրություններ: Նաև հայտնի է որպես լայնաշերտ ծայնային ծառայություն (ՎոԲ), և ներառում է ՎոԻՓ բաժանորդագրությունները ֆիքսված անլար, ԴիԷՆԷլ (DSL), կաբելային, օպտիկամանրաթելային և այլ ֆիքսված լայնաշերտ ինտերնետային հարթակների միջոցով, որոնք ապահովում են ֆիքսված հեռախոսակապ՝ օգտագործելով ինտերնետ արձանագրություն: Այն բացառում է ծրագրային ապահովման վրա հիմնված ՎոԻՓ գործիքները (օրինակ՝ ՎոԻՓ-ը Սկայփի (Skype) հետ՝ օգտագործելով համակարգչից համակարգիչ կամ համակարգչից հեռախոս կապ): Այն ՎոԻՓ բաժանորդագրությունները, որոնք չեն ենթադրում պարբերական ամսական վճար, պետք է հաշվվեն միայն այն դեպքում, եթե դրանք սկզբնավորել են կամ ապահովել թողունակություն վերջին երեք ամիսների ընթացքում:	47 818	64 850	71 371	«Հ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
3.	116	Տնային ֆիքսված հեռախոսագծերի տոկոսը	Տնային ֆիքսված հեռախոսագծերի տոկոսը ստացվում է տնային տնտեսությունները սպասարկող գործող ֆիքսված գծերի թիվը (այսինքն՝ գծեր, որոնք չեն օգտագործվում բիզնեսի, կառավարության կամ այլ մասնագիտական նպատակներով կամ որպես հանրային հեռախոսակայաններ) ֆիքսված հեռախոսագծերի ընդհանուր թվին բաժանելիս և հետո բազմապատկելով 100-ով: Տնային տնտեսությունը բաղկացած է միասին ապրող մեկ կամ ավելի մարդկանցից, ովքեր կարող են հարազատական կապ ունենալ կամ չունենալ միմյանց հետ, ովքեր կիսում են հարմարությունները և կիրառում են սննդի համատեղ օգտագործում: Գործող բաժանորդագրությունները ներառում են բոլոր հետվճարային բաժանորդագրությունները և վերջին երեք ամսվա ընթացքում գործող կանխավճարային բաժանորդագրությունները:	91.74%	91.47%	89%	«Հ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
4.	112pt	Պորտավորված ֆիքսված համարները	Պորտավորված ֆիքսված համարները ֆիքսված հեռախոսագծի ցանցում պորտավորման այն գործարքների թիվն է, որոնք իրականացվել են ֆիքսված հեռախոսահամարների համար նշված տարվա ընթացքում:	0	0	0	«Հ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)

N	ՀՄՄ-ի կոդ	Ցուցանիշ	Սահմանում	2013	2014	2015	Տրամադրման և հրապարակման պատասխանատու մարմին
2. Շարժական բջջային կապի ցանց							
5.	271	Շարժական բջջային հեռախոսակապի բաժանորդագրություններ	Նշանակում է հանրային բջջային հեռախոսակապի ծառայության բաժանորդագրությունների թիվը, որը մուտք է ապահովում Հանրային համակցված հեռախոսային ցանց՝ օգտագործելով բջջային տեխնոլոգիա: Ցուցանիշը ներառում է (և բաժանված է) հետվճարային բաժանորդագրությունների թիվը, և ակտիվ կանխավճարային հաշիվների թիվը (այսինքն՝ որոնք օգտագործվել են վերջին 3 ամիսների ընթացքում): Այս ցուցանիշն առնչվում է բոլոր շարժական բջջային կապի բաժանորդագրություններին, որոնք առաջարկում են ծայնային կապ: Այն բացառում է բաժանորդագրությունները տվյալների քարտերի կամ ՅուԷսԲի (USB) մոդեմների միջոցով, հանրային շարժական տվյալների ծառայություններին, առանձին հատուկ շարժական ռադիոյի, հեռակետի, ռադիո փեյջինգի և հեռուստաչափության ծառայությունների բաժանորդագրությունները:	3 346 275	3 459 137	3 464 490	«Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)»
6.	271բ	Կանխավճարային շարժական բջջային հեռախոսակապի բաժանորդագրություններ	Շարժական բջջային հեռախոսակապի բաժանորդագրությունների ընդհանուր թիվը, որոնք օգտվում են կանխավճարային ծառայություններից: Սրանք այն բաժանորդագրություններն են, որոնք դեբում ամսական ընթացիկ վճարի փոխարեն օգտագործողները ձեռք են բերում օգտագործման ժամանակի բլոկեր: Պետք է ներառվեն միայն ակտիվ բաժանորդագրությունները (որոնք վերջին երեք ամսվա ընթացքում օգտագործվել են առնվազն մեկ անգամ՝ զանգ ուղարկելու կամ ընդունելու, կամ անձայն գործողություն իրականացնելու համար, ինչպես օրինակ կարճ հաղորդագրություն (SMS) ընդունելը կամ ստանալը, կամ մուտքը հ'նտերնետ):	2 693 342	2 793 136	2 850 542	«Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)»
7.	271m2m	M2M շարժական ցանցի բաժանորդագրություններ	M2M շարժական ցանցի բաժանորդագրություններ նշանակում է այն շարժական բջջային մեքենայից-մեքենա բաժանորդագրությունների թիվը, որոնք նշանակված են մեքենաներում և սարքերում (ավտոմեքենաներ, խելացի չափիչներ, սպառողական էլեկտրոնիկա) օգտագործման համար՝ ցանցային սարքերի միջև տվյալների փոխանակման նպատակով, և չեն հանդիսանում սպառողական բաժանորդագրությունների մաս: Օրինակ՝ SIM քարտերն անձնական ուղորդման սարքերի, խելացի չափիչների, գնացքների և ավտոմեքենաների մեջ պետք է ներառվեն: Շարժական ապարատային բանալիների և թաբլեթների բաժանորդագրությունները պետք է բացառվեն:	1 677	28 491	54 931	«Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)»

N	ՀՄՄ-ի կոդ	Ցուցանիշ	Սահմանում	2013	2014	2015	Տրամադրման և հրապարակման պատասխանատու մարմին
8.	271pop	Շարժական բջջային կապի ցանցի ծածկույթով ապահովված բնակչության տոկոսը	Շարժական բջջային կապի ցանցի ծածկույթով ապահովված բնակչության տոկոսը նշանակում է բնակիչների տոկոսը, ովքեր գտնվում են շարժական բջջային կապի ազդանշանի տիրույթում՝ անկախ նրանից՝ իրենք բաժանորդ են, թե օգտագործողներ: Սա հաշվվում է շարժական բջջային կապի ազդանշանի տիրույթում գտնվող բնակիչների թիվն ընդհանուր բնակչության թվին բաժանելով և բազմապատկելով 100-ով:	100%	100%	100%	«Հ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)»
9.	271pt	Պորտավորված շարժական բջջային կապի համարներ	Պորտավորված շարժական բջջային կապի համարներ նշանակում է նշյալ տարվա ընթացքում պորտավորման ենթարկված շարժական կապի համարների թիվը:	0	26 684	23 338	«Հ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)»
3. Ինտերնետ							
10.	4214ս	Օգտագործված միջազգային ինտերնետ կապի թողունակությունը (հոսքը), Մբիթ/վրկ	Օգտագործված միջազգային ինտերնետ կապի թողունակություն նշանակում է ինտերնետի հոսքի փոխանցման համար միջազգային օպտիկամանրաթելային մալուխների և ռադիո կապուղիների հոսքի ծանրաբեռնվածությունը միջինով (արտահայտված Մբիթ/վրկ): Միջինը պետք է հաշվարկվի նշյալ տարվա 12 ամիսների ընթացքում, և պետք է հաշվի առնի բոլոր միջազգային ինտերնետ կապուղիների հոսքը: Եթե հոսքն ասիմետրիկ է (այսինքն՝ ավելի շատ մուտքային, քան ելքային հոսք), մուտքային հոսքի միջին ծանրաբեռնվածությունը պետք է տրամադրվի: Տարբեր միջազգային ինտերնետի կապուղիների հոսքի միասնական միջին ծանրաբեռնվածությունը պետք է ներկայացվի որպես լրացում յուրաքանչյուր կապուղու հոսքի միջին ծանրաբեռնվածության:	45 600	61 528	118 187	«Հ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)»
11.	4214ի	Լիտ/հազեցվածությամբ միջազգային ինտերնետ կապի թողունակությունը, Մբիթ/վրկ	Լիտ/հազեցվածությամբ միջազգային ինտերնետ կապի թողունակությունը նշանակում է ինտերնետ կապի հոսքի պահպանվող միջազգային օպտիկամանրաթելային մալուխների ամբողջական լիտ (Lit) հզորությունը՝ գումարած ինտերնետ կապի հոսքի համար պահպանվող միջազգային ռադիո կապուղիների հազեցվածության հզորությունը: Պետք է արտահայտվի Մբիթ/վրկ-ով: Պետք է ներառվի միջազգային կապուղիների ունեցող և շահագործող անդրազգային օպերատորների լիտ/հազեցվածությամբ միջազգային ինտերնետ կապի թողունակությունը, ինչպես նաև մեծածախի կողմից Ազգային ինտերնետ ծառայություն տրամադրողներին վարձակալությամբ տրվող միջազգային ինտերնետ թողունակության լիտ/հազեցվածությամբ հզորությունը: Եթե հզորությունն ասիմետրիկ է (այսինքն՝ ավելի շատ մուտքային, քան ելքային հոսք), մուտքային հոսքի միջին ծանրաբեռնվածությունը պետք է տրամադրվի:	76 000	87 897	158 201	«Հ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)»

N	ՀՄՄ-ի կոդ	Ցուցանիշ	Սահմանում	2013	2014	2015	Տրամադրման և հրապարակման պատասխանատու մարմին
12.	99H	Ինտերնետից օգտվողների թիվը	<p>Իրականացվում է հետևյալ մեթոդաբանությամբ.</p> <p>1) Հաշվարկել 10-ից 74 տարեկան բնակչության քանակը, կիրառելով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն տվյալ տարվա համար հաշվարկված տնային տնտեսությունների առկա բնակչության գործակիցը (ՀԲԹ):</p> <p>2) ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված բնակչության թվի վերաբերյալ տվյալները (ԲԹ):</p> <p>3) Հաշվարկել ֆիքսված (լարային) ինտերնետ կապի բաժանորդագրությունների ընդհանուր թիվը, որը ներառում է ընդհանուր ֆիքսված (լարային) լայնաշերտ և Դայլ-Ափ (dial-up) բաժանորդագրությունները (վերջին 3 ամիսներում ակտիվ բաժանորդագրությունները) (ՖԲԹ):</p> <p>4) Հաշվարկել առանձնացված շարժական կապով տվյալների փոխանցման ընդհանուր թիվը, որը ներառում է որպես ՅուԵսԲի (USB) մոդեմ (դոնգլ), նաև շարժական կապի ՎայՄաքս (WiMax) բաժանորդագրությունները (ԱՇԲԹ):</p> <p>5) Հաշվարկել ստանդարտ շարժական կապի բաժանորդագրություններ՝ լայնաշերտ կապի 256 Մբ/վ և ավելի արագություններով տվյալների հաղորդման միջոցով (վերջին 3 ամսում օգտագործել են վերը նշված ծառայությունը) (ՇԲԹ):</p> <p>6) Ինտերնետից օգտվող բաժանորդների քանակի (ԻՕԲԹ) հաշվարկը կատարել հետևյալ բանաձևով.</p> $\text{ԻՕԲԹ} = (\text{ՖԲԹ} + 50\% \text{ ԱՇԲԹ} + 10\% \text{ ՇԲԹ}) * \text{ՀԲԹ} + 50\% \text{ ԱՇԲԹ}$ <p>Ինտերնետից օգտվող բաժանորդների մասնաբաժինը (ԻՕԲՄ) հաշվարկը կատարել հետևյալ բանաձևով.</p> $\text{ԻՕԲՄ} = [(\text{ՖԲԹ} + 50\% \text{ ԱՇԲԹ} + 10\% \text{ ՇԲԹ}) * \text{ՀԲԹ} + 50\% \text{ ԱՇԲԹ}] / \text{ԲԹ} * 100$	45.35	50.03	55.29	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն

N	ՀՄՄ-ի կոդ	Ցուցանիշ	Սահմանում	2013	2014	2015	Տրամադրման և հրապարակման պատասխանատու մարմին
4. Ֆիքսված (լարային) լայնաշերտ կապի ըստ տեխնոլոգիաների/արագության							
13.	4213tfbb	Ֆիքսված լայնաշերտ կապի բաժանորդագրությունները (ներկայացված է իրավաբանական անձանց թիվը)	Ֆիքսված լայնաշերտ կապի բաժանորդագրությունները նշանակում է հանրային ինտերնետ բարձր արագությամբ մուտք գործելու բաժանորդագրություններ (ԹԻՍԻՓԻ/ԱյՓԻ (TCP/IP) միացում), որի նվազագույն արագությունը պետք է հավասար լինի կամ գերազանցի 256 կբիթ/վրկ արագությունը: Սա ներառում է կաբելային մոդեմի, Դիէսէլ (DSL)-ի, տներում/շենքերում մանրաթելային ինտերնետի և այլ ֆիքսված (լարային) լայնաշերտ կապի բաժանորդագրությունները, արբանյակային լայնաշերտ և ցամաքային ֆիքսված անլար կապի բաժանորդագրությունները: Հանրագումարը հաշվարկվում է անկախ վճարման մեթոդից: Այն բացառում է բաժանորդագրությունները, որոնք ապահովված են մուտքով դեպի տվյալների հաղորդակցություն (ներառյալ ինտերնետ) շարժական բջջային կապի ցանցերի միջոցով: Այն պետք է ներառի ֆիքսված ՈւայՄԱՔՍ (WiMAX) և ցանկացած այլ ֆիքսված անլար տեխնոլոգիաները: Այն ներառում է ինչպես բնակելի բաժանորդագրությունները, այնպես էլ կազմակերպությունների բաժանորդագրությունները:	243 058	272 885	286 319	<< հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
14.	4213tfb_o	Ֆիքսված լայնաշերտ կապի բաժանորդագրությունները կազմակերպությունների համար	Ֆիքսված լայնաշերտ կապի բաժանորդագրությունները կազմակերպությունների համար նշանակում է հանրային և մասնավոր կազմակերպությունների (այսինքն՝ ոչ բնակելի հաճախորդներ) կողմից ֆիքսված վայրից նվազագույնը 256 կբիթ/վրկ գերազանցող կամ հավասար արագությամբ հանրային ինտերնետ մուտք գործելու համար պայմանագրով կնքված բաժանորդագրությունների ընդհանուր թիվը: Սա ներառում է կաբելային մոդեմի, Դիէսէլ (DSL)-ի, տներում/շենքերում մանրաթելային ինտերնետի և այլ ֆիքսված անլար լայնաշերտ կապի տեխնոլոգիաները: Այն բացառում է բնակելի բաժանորդագրությունները և բաժանորդագրությունները, որոնք ապահովված են մուտքով դեպի տվյալների հաղորդակցություն (ներառյալ ինտերնետ) շարժական բջջային կապի ցանցերի միջոցով:	13 096	10 975	10 844	<< հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
15.	4213cab	Կաբելային մոդեմով ինտերնետ կապի բաժանորդագրությունները	Կաբելային մոդեմով ինտերնետ կապի բաժանորդագրությունները նշանակում է ինտերնետ կապի բաժանորդագրությունների թիվը, որոնք ինտերնետ մուտք գործելու համար օգտագործում են կաբելային մոդեմի ծառայությունները. նվազագույն արագությունը պետք է գերազանցի կամ հավասար լինի 256 կբիթ/վրկ: Կաբելային մոդեմը կաբելային հեռուստատեսության ցանցին միացված մոդեմն է:	0	0	0	<< հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)

N	ՀՄՄ-ի կոդ	Ցուցանիշ	Սահմանում	2013	2014	2015	Տրամադրման և հրապարակման պատասխանատու մարմին
16.	4213dsl	Դիէսէլ (DSL) ինտերնետ կապի բաժանորդագրությունները	Դիէսէլ (DSL) ինտերնետ կապի բաժանորդագրությունները նշանակում է ինտերնետ մուտք գործելու համար Թվային բաժանորդագրի գծի (Դիէսէլ (DSL) ծառայություններից օգտվող ինտերնետ կապի բաժանորդագրությունների թիվը (նվազագույն արագությունը պետք է գերազանցի կամ հավասար լինի 256 կբիթ/վրկ արագությանը): Դիէսէլ (DSL)-ը տեխնոլոգիա է, որն ապահովում է տներում և փոքր բիզնեսներում սովորական պղնձե հեռախոսագծերով բարձր թողունակությամբ տեղեկատվությունը: Սա պետք է բացառի շատ բարձր արագությամբ թվային բաժանորդագրի գծի (ՎիԴիէսէլ (VDSL)) բաժանորդագրությունները, եթե դրանք ներառված են ուղղակիորեն դեպի բնակելի վայրեր մանրաթելային կապի բաժանորդագրություններում:	161 799	155 008	141 211	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
17.	4213fth/b	Տներում/շենքերում մանրաթելային ինտերնետ կապի բաժանորդագրությունները	Տներում/շենքերում մանրաթելային ինտերնետ կապի բաժանորդագրությունները նշանակում է ինտերնետ կապի բաժանորդագրությունների թիվը, որոնք օգտվում են տներում կամ շենքերում մանրաթելային կապից, որի նվազագույն արագությունը պետք է հավասար լինի կամ գերազանցի 256 կբիթ/վրկ արագությունը: Սա պետք է ներառի այն բաժանորդագրությունները, որոնց դեպքում մանրաթելը գնում է ուղիղ դեպի բաժանորդի բնակարան կամ, երբ մանրաթելը գնում է դեպի շենք՝ ավարտվելով շենքի արտաքին պատից ոչ ավել, քան 2 մետր հեռավորության վրա: Մանրաթելերը դեպի առանձնասենյակ և հանգույց բացառվում են:	63 809	95 920	120 453	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)

N	ՀՄՄ-ի կոդ	Ցուցանիշ	Սահմանում	2013	2014	2015	Տրամադրման և հրապարակման պատասխանատու մարմին
18.	4213ob	Այլ ֆիքսված լայնաշերտ ինտերնետ կապի բաժանորդագրությունները	<p>Այլ ֆիքսված (լարային) լայնաշերտ ինտերնետ կապի բաժանորդագրությունները նշանակում է ինտերնետ կապի բաժանորդագրությունները, որոնք ինտերնետ մուտք գործելու համար օգտագործում են այլ ֆիքսված (լարային) լայնաշերտ կապի տեխնոլոգիաներ (Դիէսէլ (DSL)-ից, կաբելային մոդեմից և մանրաթելից տարբեր), և որոնք նվազագույն արագությունը պետք է հավասար լինի կամ գերազանցի 256 կբիթ/վրկ արագությունը: Սա ներառում է այնպիսի տեխնոլոգիաներ, ինչպիսիք են էտերնետ LAN-ը (Ethernet LAN) և լայնաշերտ կապը էլեկտրական հոսանքազանցի վրայով ԲիՓիէլ (BPL) հաղորդակցությունը: Էտերնետ LAN բաժանորդագրությունները նշանակում է ԱյիԻԻ (IEEE) 802.3 տեխնոլոգիան օգտագործող բաժանորդագրությունները: ԲիՓիէլ (BPL) բաժանորդագրությունները դա լայնաշերտ կապի էլեկտրական հոսանքազանցի միջոցով ծառայություններից օգտվող բաժանորդագրություններ է: Ժամանակավոր լայնաշերտ կապի մուտքով ապահովված օգտատերերը (օր.՝ ռոումինգը ՓիՐաբլուLAN (PWLAN) գերբեռնված կետերի միջև), ՈւայՄաքս (WiMax)-ից օգտվողները և շարժական բջջային կապի ցանցերի միջոցով դեպի ինտերնետ մուտքով ունեցողները բացառված են:</p>	8 812	12 324	13 719	«Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)»
19.	271s	Արբանյակային լայնաշերտ կապի բաժանորդագրությունները	<p>Արբանյակային լայնաշերտ կապի բաժանորդագրությունները նշանակում է արբանյակային ինտերնետ կապի բաժանորդագրությունների թիվը՝ առնվազն 256 կբիթ/վրկ արագությամբ ներբեռնման գովազդվող հնարավորությամբ: Այն վերաբերում է մանրածախ բաժանորդագրությունների տեխնոլոգիային, այլ ոչ հիմնական (backbone) տեխնոլոգիային</p>	0	0	0	«Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)»
20.	271fw	Ցամաքային ֆիքսված անլար կապի բաժանորդագրությունները	<p>Ցամաքային ֆիքսված անլար կապի բաժանորդագրությունները նշանակում է ցամաքային ֆիքսված անլար կապի բաժանորդագրությունների թիվը՝ առնվազն 256 կբիթ/վրկ արագությամբ ներբեռնման գովազդվող հնարավորությամբ: Սա ներառում է ֆիքսված ՈւայՄաքս (WiMax) և ֆիքսված անլար կապի բաժանորդագրությունները, սակայն բացառում է գերծանրաբեռնված ժամերին պատահական օգտվողներին ՈւայՖայ (Wi-Fi) գերծանրաբեռնված կապի բաժանորդներին: Այն նաև բացառում է շարժական լայնաշերտ կապի բաժանորդագրությունները, երբ օգտագործողները կարող են երկրի տարածքում ծառայության մուտք ունենալ, երբ ծածկույթը հասանելի է:</p>	8 638	9 633	10 936	«Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)»

N	ՀՄՄ-ի կոդ	Ցուցանիշ	Սահմանում	2013	2014	2015	Տրամադրման և հրապարակման պատասխանատու մարմին
21.	4213_256 to2	Բաժանորդագրություններ՝ սկսած 256 Կբիթ/վրկ և պակաս քան 2 Մբիթ/վրկ	Բոլոր ֆիքսված (լարային) լայնաշերտ ինտերնետ կապի բաժանորդագրությունները, որոնց նվազագույն գովազդվող արագությունը հավասար է կամ գերազանցում է 256 Կբիթ/վրկ արագությունը և պակաս է 2 Մբիթ/վրկ-ից:	95 406	84 024	3341	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
22.	4213_2to 10	Բաժանորդագրություններ՝ սկսած 2 Մբիթ/վրկ և պակաս քան 10 Մբիթ/վրկ	Բոլոր ֆիքսված (լարային) լայնաշերտ ինտերնետ կապի բաժանորդագրությունները, որոնց նվազագույն գովազդվող արագությունը հավասար է կամ գերազանցում է 2 Մբիթ/վրկ արագությունը և պակաս է 10 Մբիթ/վրկ-ից:	112 665	143 033	187 091	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
23.	4213_G10	Բաժանորդագրություններ, որոնք հավասար են կամ գերազանցում են 10 Մբիթ/վրկ	Բոլոր ֆիքսված (լարային) լայնաշերտ ինտերնետ կապի բաժանորդագրությունները, որոնց նվազագույն գովազդվող արագությունը հավասար է կամ գերազանցում է 10 Մբիթ/վրկ արագությունը:	26 349	45 828	95 887	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
5. Շարժական լայնաշերտ կապ							
24.	271G	Առնվազն 3-րդ սերնդի (3G) շարժական ցանցի ծածկույթով բնակչության տոկոսը	Առնվազն 3-րդ սերնդի (3G) շարժական ցանցի ծածկույթով բնակչության տոկոսը նշանակում է այն բնակիչների տոկոսը, ովքեր գտնվում են առնվազն 3-րդ սերնդի (3G) շարժական բջջային ազդանշանի տիրույթում՝ անկախ իրենց բաժանորդ լինելուց: Սա հաշվարկվում է առնվազն 3-րդ սերնդի (3G) շարժական բջջային ազդանշանի տիրույթում գտնվող բնակիչների թիվն ընդհանուր բնակչության թվին բաժանելիս և բազմապատկելով 100-ով:	97.68%	98'8%	99.9%	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
25.	271GA	Առնվազն ԷլԹԻԻ/ՈւայՄաքս (LTE/WiMax) շարժական ցանցի ծածկույթ ունեցող բնակչության տոկոսը	Առնվազն ԷլԹԻԻ/ (LTE/WiMax) շարժական ցանցի ծածկույթ ունեցող բնակչության տոկոսը նշանակում է այն բնակիչների տոկոսը, ովքեր ապրում են ԷլԹԻԻ /ԷլԹԻԻ-Ադվանսիդ (LTE/LTE-Advanced) (զարգացած), շարժական ՈւայՄաքս/ՈւայռելեսՄԱՆ (WiMax/WirelessMAN) (Անլար MAN) կամ այլ զարգացած շարժական բջջային կապի ցանցերի տիրույթում՝ անկախ իրենց բաժանորդ լինելուց: Սա հաշվարկվում է վերոնշյալ շարժական բջջային կապի տեխնոլոգիաների ծածկույթ ունեցող բնակիչների թիվն ընդհանուր բնակչության թվին բաժանելիս և բազմապատկելով 100-ով: Այն բացառում է մարդկանց, ովքեր գտնվում են միայն Հաշեֆիս (HSPA), ՅուԷմԹիԷս (UMTS), ԻՎ-ԴՕ (EV-DO) և նախորդ 3G տեխնոլոգիաների ծածկույթում, ինչպես նաև բացառում է ֆիքսված ՈւայՄաքս (WiMax) ծածկույթը:	44%	46%	46.5%	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)

N	ՀՄՄ-ի կոդ	Ցուցանիշ	Սահմանում	2013	2014	2015	Տրամադրման և հրապարակման պատասխանատու մարմին
26.	271mw	Ակտիվ շարժական լայնաշերտ կապի բաժանորդագրությունները	Ակտիվ շարժական լայնաշերտ կապի բաժանորդագրությունները նշանակում է հանրային հիտերնետի ստանդարտ շարժական լայնաշերտ կապի և առանձնացված շարժական լայնաշերտ կապի բաժանորդագրությունների հանրագումարը: Այն ներառում է իրական բաժանորդներին, ոչ հնարավոր բաժանորդներին՝ չնայած վերջիններս կարող են ունենալ լայնաշերտ կապի հնարավորությամբ հեռախոսներ:	923 284	1 020 582	1 234 437	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
27.	271mb_active	Ստանդարտ շարժական լայնաշերտ կապի բաժանորդագրությունները	Նշանակում է ակտիվ շարժական բջջային կապի բաժանորդագրությունները տվյալների 256 կբիթ/վ կամ առավել մեծ գովազդվող արագությամբ, որոնք ապահովում են ավելի լավ հիտերնետի համար մուտքը Հաշվարկային (HTTP)-ի միջոցով, և որոնք վերջին երեք ամիսների ընթացքում օգտագործվել են տվյալների հաղորդակցության համար հիտերնետ արձանագրության կիրառմամբ ԱկՓի (IP): Ստանդարտ կարճ հաղորդագրությունները էսէմես (SMS) և մուլտիմեդիա հաղորդագրությունները էմէմես (MMS) չեն համարվում ակտիվ հիտերնետ տվյալների կապեր, նույնիսկ եթե դրանք առաքվում են ԱկՓի (IP)-ի միջոցով: Սա ներառում է շարժական կապի բաժանորդագրությունները, որոնք օգտագործում են շարժական լայնաշերտ կապի ծառայությունները վճարման-օգտագործման հիման վրա: Այն բացառում է շարժական կապի բաժանորդագրությունները շարժական լայնաշերտ կապի մուտքի առանձին ամսական տվյալների պլանով (տես Ցուցանիշ 25b՝ առանձնացված շարժական լայնաշերտ կապի բաժանորդագրությունները):	682 085	760 917	999 477	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
28.	271md	Առանձնացված շարժական կապի բաժանորդագրությունները	Նշանակում է (շարժական կապի ցանցը շրջանցող) առանձնացված տվյալների փոխանցման ծառայությունների բաժանորդագրությունները, որոնք թույլ են տալիս առավել լավ հիտերնետի մուտքը և որոնք ձեռք են բերվում ձայնային ծառայություններից առանձին՝ որպես Սթենդալոն (standalone) ծառայություն (օրինակ՝ օգտագործելով տվյալների քարտ, ինչպիսին է ՅուԷսԲի (USB) մոդեմը/շարժական ապարատները) կամ որպես ձայնային ծառայություններին հավելյալ տվյալների փաթեթ, որը պահանջում է հավելյալ բաժանորդագրություն: Բաժանորդագրման համար պարբերական վճարներ ունեցող բոլոր առանձնացված շարժական լայնաշերտ կապի բաժանորդագրությունները ներառվում են որպես «ակտիվ տվյալների բաժանորդագրություններ»՝ անկախ փաստացի օգտագործումից: Կանխավճարային շարժական լայնաշերտ կապի պլանները պահանջում են կիրառություն վերջին երեք ամիսների ընթացքում, եթե չկա ամենամսյա բաժանորդագրություն: Այս ցուցանիշը կարող է նաև ներառել շարժական ՈւայՄաքս (WiMax) կապի բաժանորդագրությունները, եթե երկրում այդպիսիք կան:	241 199	259 665	212 125	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)

N	ՀՄՄ-ի կոդ	Ցուցանիշ	Սահմանում	2013	2014	2015	Տրամադրման և հրապարակման պատասխանատու մարմին
6. Միավորված հեռահաղորդակցության ծառայություններ							
29.	4213_2x	Ֆիքսված լայնաշերտ կապի և ֆիքսված հեռախոսակապի փաթեթների բաժանորդագրությունները	Ֆիքսված լայնաշերտ կապի և ֆիքսված հեռախոսակապի փաթեթների բաժանորդագրությունները նշանակում է միավորված հեռահաղորդակցության բաժանորդագրությունների թիվը՝ ներառյալ ֆիքսված լայնաշերտ կապի և ֆիքսված հեռախոսակապի ծառայությունները: Միայն միավորված հեռահաղորդակցության ծառայությունների սահմանման մեջ նշված չափանիշներին համապատասխանող բաժանորդագրությունները պետք է ներառվեն: Լրացուցիչ հեռահաղորդակցության ծառայություններ ներառող բաժանորդագրությունները, ինչպիսիք են եռակի նշանակություն ունեցող բաժանորդագրությունները՝ ներառյալ ֆիքսված հեռակապը, ֆիքսված լայնաշերտ կապը և վճարովի հեռուստետեսությունը, պետք է բացառվեն:	Տեղեկատվություն առկա չէ	154 999	149 176	«Հ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
30.	4213_3x	Ֆիքսված լայնաշերտ կապի, ֆիքսված հեռախոսակապի և վճարովի հեռուստատեսության փաթեթների բաժանորդագրությունները	Ֆիքսված լայնաշերտ կապի, ֆիքսված հեռախոսակապի և վճարովի հեռուստատեսության փաթեթների բաժանորդագրությունները նշանակում է միավորված հեռահաղորդակցության բաժանորդագրությունների թիվը՝ ներառյալ ֆիքսված լայնաշերտ կապի, ֆիքսված հեռախոսակապի և վճարովի հեռուստատեսության ծառայությունները: Միայն միավորված հեռահաղորդակցության ծառայությունների սահմանման մեջ նշված չափանիշներին համապատասխանող բաժանորդագրությունները պետք է ներառվեն: Լրացուցիչ հեռահաղորդակցության ծառայություններ ներառող բաժանորդագրությունները, ինչպիսիք են քառակի նշանակություն ունեցող բաժանորդագրությունները՝ ներառյալ ֆիքսված հեռակապը, ֆիքսված լայնաշերտ կապը, վճարովի հեռուստետեսությունը և շարժական ձայնային կապը/տվյալների փոխանցումը, չպետք է հաշվարկվեն այս ցուցանիշի ներքո:	13 055	18 289	43 507	«Հ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
7. Ծառայությունների որակ							

N	ՀՄՄ-ի կոդ	Ցուցանիշ	Սահմանում	2013	2014	2015	Տրամադրման և հրապարակման պատասխանատու մարմին
31.	i146u	Շարժական բջջային կապի անպատասխան հեռախոսազանգերի հարաբերակցությունը (%)	Շարժական բջջային կապի անպատասխան հեռախոսազանգերի հարաբերակցությունը նշանակում է շարժական բջջային կապի անպատասխան հեռախոսազանգերի և տվյալ տարվա ընթացքում շարժական բջջային հեռախոսազանգերի կատարման փորձերի ընդհանուր թվի հարաբերակցությունը: Անպատասխան զանգը ծածկվում է գտնվող հասանելի հեռախոսահամարին կատարվող հեռախոսազանգի փորձ է, որի ժամանակ զանգը մնում է անպատասխան, ոչ էլ զանգն ընդունողի զբաղվածության կամ զանգի ընդունման ազդանշան է ստացվում զանգն ուղարկողի կողմից 40 վայրկյանի ընթացքում՝ սկսած այն պահից, երբ ցանցի կողմից ստացվում է նպատակային բաժանորդի համարի վերջին նիշը: Տվյալներն արտահայտվում են տոկոսով:	19	16.7	1.52	«Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)»
32.	i146d	Շարժական բջջային կապի ընդհատված հեռախոսազանգերի հարաբերակցությունը (%)	Շարժական բջջային կապի ընդհատված հեռախոսազանգերի հարաբերակցությունը նշանակում է շարժական բջջային կապի մուտքային և ելքային հեռախոսազանգերի չափաբաժինները, որոնք ճշգրիտ միացումից, և հետևաբար նշանակված հոսքային ալիք ունենալուց հետո, ընդհատվում կամ դադարեցվում են նախքան օգտագործողի կողմից դրանց բնական ավարտը՝ վաղաժամ ընդհատման պատճառով լինելով օպերատորի ցանցում: Տվյալներն արտահայտվում են տոկոսով:	0.56	0.56	0.51	«Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)»
33.	i147t	Ծառայության ակտիվացման ժամանակը (լարային) լայնաշերտ կապի ծառայության համար օրերով	Ծառայության ակտիվացման ժամանակը ֆիքսված լայնաշերտ կապի ծառայության համար նշանակում է դիմումի օրվանից մինչև ծառայության ակտիվացման օրը ընկած ժամանակը: Հարկավոր է ներկայացնել 12 ամսվա հաշվետու ժամանակահատվածում ստացված բոլոր նոր դիմումների ծառայությունների ակտիվացման միջին ժամանակահատվածը:	3	3-5	4	«Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)»
8. Հոսք (տրաֆիկ)							
34.	131m	Ֆիքսվածից հեռախոսակապի հոսքը րոպեներով	Ֆիքսվածից ֆիքսվածին հեռախոսակապի ավարտված տեղական և ներքին երկար տարածության վրա իրականացվող ձայնային կապի հոսքից: Ցուցանիշը պետք է ներկայացվի նշված տարվա ընթացքում հոսքի րոպեների քանակով: Սա պետք է բացառի դայալ-սթի (dial-up)-ի միջոցով ինտերնետ մուտք գործելու համար օգտագործված րոպեները:	1 420 948 389	1 180 692 361	967 509 786.5	«Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)»
35.	1313wm	Ֆիքսվածից հեռախոսակապի րոպեներով	Ֆիքսվածից շարժական հեռախոսակապի հոսքը րոպեներով նշանակում է երկրի ներսում բոլոր ֆիքսված հեռախոսակապի ցանցերից դեպի շարժական բջջային կապի բոլոր ցանցեր իրականացված ընդհանուր հոսքը: Ցուցանիշը պետք է ներկայացվի նշված տարվա ընթացքում հոսքի րոպեների քանակով:	69 870 127	60 214 659	57 649 522.62	«Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)»

N	ՀՄՄ-ի կոդ	Ցուցանիշ	Սահմանում	2013	2014	2015	Տրամադրման և հրապարակման պատասխանատու մարմին
36.	132m	Միջազգային ֆիքսված կապի ելքային հեռախոսազանգերի հոսքը ընդհանուր	Նշանակում է տվյալ երկրում սկզբնավորվող, այդ երկրից դուրս նպատակակետ ունեցող հաջողված (ավարտված) ֆիքսված հեռախոսակապի ծայնային հոսքը: Սա պետք է ներառի երկրից դուրս դեպի բջջային հեռախոսներ հոսքը: Ցուցանիշը պետք է ներկայացվի հոսքի ընդհանուր քանակով: Այն բացառում է այլ երկրներում սկզբնավորվող զանգերը: Այն պետք է ներառի ՎՕՄՓԻ(VoIP)հոսքը:	28 374 419	41 999 581	10 719 169.57	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
37.	132mi	Միջազգային ֆիքսված կապի մուտքային հեռախոսազանգերի հոսքը ընդհանուր	Նշանակում է տվյալ երկրից դուրս սկզբնավորվող, այդ երկրի ներսում նպատակակետ ունեցող հաջողված (ավարտված) ֆիքսված հեռախոսակապի ծայնային հոսքը՝ անկախ նրանից զանգը ֆիքսված, թե շարժական կապի բաժանորդագրից էր: Այն բացառում է այլ երկրներում ընդհատվող զանգերի ընդհանուր քանակը, սակայն պետք է ներառի ՎՕՄՓԻ(VoIP) հոսքը:	41 620 235	43 525 635	27 027 262.24	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
38.	133wm	Ներքին շարժական հեռախոսակապի ընդհանուր հոսքը	Ներքին շարժական հեռախոսակապի հոսքը նշանակում է երկրի ներսում շարժական կապի բաժանորդների կողմից կատարված զանգերի ընդհանուր թիվը (ներառյալ ֆիքսված հեռախոսին ընդհանուր և շարժական հեռախոսին ընդհանուր բաժանորդներին):	7 561 156 083	8 721 328 931	8 287 275 762	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
39.	1332wmf	Ելքային շարժական կապի հոսքը ֆիքսված կապի ցանցերին ընդհանուր	Նշանակում է տվյալ երկրի ներսում շարժական բջջային կապի ցանցերից դեպի ֆիքսված գծով հեռախոսակապի ցանցեր կատարված զանգերի ընդհանուր թիվը: Ցուցանիշը նշանակում է երկրի ներսում շարժական կապի ցանցերում սկզբնավորվող և ֆիքսված գծով հեռախոսակապի ցանցերում դադարող ելքային ընդհանուր թիվը:	64 188 338	58 214 803	51 508 832.2	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
40.	1333wm	Ելքային շարժական կապից դեպի միջազգային կապ ընդհանուր	Ելքային շարժական կապից դեպի միջազգային կապ նշանակում է տվյալ երկրի ներսում սկզբնավորվող շարժական կապի ընդհանուր թիվն այդ երկրից դուրս ցանկացած նպատակակետին:	505 952 901	458 788 400	328 139 702.2	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
41.	1335wm	Մուտքային միջազգային կապի հոսքը դեպի շարժական կապի ցանցեր ընդհանուր	Մուտքային միջազգային կապի հոսքը դեպի շարժական կապի ցանցեր նշանակում է այլ երկրում սկզբնավորված շարժական կապի ցանցերի կողմից ստացված մուտքային ընդհանուր թիվը (ֆիքսված և շարժական կապեր) ընդհանուր:	358 426 852	350 166 609	266 246 458.5	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
42.	133sms	Ուղարկված կարճ հաղորդագրությունները	Ուղարկված կարճ հաղորդագրությունները նշանակում է շարժական կապի կարճ հաղորդագրությունների ծառայությամբ էսեմես (SMS) ազգային և միջազգային նպատակակետերի ուղարկված հաղորդագրությունների ընդհանուր թիվը: Սա պետք է բացառի համակարգիչներից շարժական կապի ապարատների կամ այլ համակարգիչների ուղարկված հաղորդագրությունները:	349 117 611	393 253 846	327 958 503	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)

N	ՀՄՄ-ի կոդ	Ցուցանիշ	Սահմանում	2013	2014	2015	Տրամադրման և հրապարակման պատասխանատու մարմին
9. Հոսք							
43.	132t	Միջազգային ելքային հեռախոսակապի հոսքը ընդհանուր	Նշանակում է ազգային ցանցերում, ֆիքսված և շարժական կապի ցանցում՝ ներառյալ կառավարվող ՎՕՍԿ (VoIP) կապում սկզբնավորվող հեռախոսակապի հոսքի միջազգային ելքային հաջողված (ավարտված) թույլատրելի:	534 327 320	470 896 560	338 858 872.1	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
44.	132ti	Միջազգային մուտքային հեռախոսակապի հոսքը ընդհանուր	Նշանակում է երկրից դուրս սկզբնավորվող հեռախոսակապի հոսքի միջազգային մուտքային հաջողված (ավարտված) և ազգային ֆիքսված և շարժական կապի ցանցերում առանց փոխանցման դադարող թույլատրելի՝ ներառյալ կառավարվող ՎՕՍԿ (VoIP) կապ:	400 047 087	393 668 145	293 273 720.7	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
45.	135tfb	Ֆիքսված (լարային) լայնաշերտ ինտերնետ կապի հոսքը (էկզաբիթերով)	Ֆիքսված (լարային) լայնաշերտ ինտերնետ կապի հոսքը (էկզաբիթերով) նշանակում է վերջնական օգտագործողի հասանելիության կետում չափվող հոսքը, որը սկզբնավորվում է ֆիքսված լայնաշերտ կապի օպերատորի կողմից: Այն պետք է չափվի ներբեռնման և վերբեռնման հոսքերի գումարով: Սա պետք է բացառի մեծածախ հոսքը, «պատված այգին», ԱյՖիԹիՎի (IPTV) (ինտերնետ արձանագրությամբ հեռուստատեսություն) և կաբելային հեռուստատեսության հոսքը:	0.12	0.15	0.28	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
46.	136mwi	Շարժական լայնաշերտ ինտերնետ կապի հոսքը (երկրի ներսում)	Շարժական լայնաշերտ ինտերնետ կապի հոսքը (երկրի ներսում) նշանակում է լայնաշերտ կապի հոսքի ծավալները, որոնք սկզբնավորվում են երկրի ներսում 3G (3-րդ սերնդի) ցանցերից կամ այլ առավել առաջընթաց շարժական կապի ցանցերից՝ ներառյալ 3G վերազինումը, էվոլյուցիաները կամ հավասարազոր չափանիշները՝ տվյալների փոխանցման արագությունների տեսանկյունից: Հոսքը պետք է հավաքագրվի և ամփոփվի երկրի մակարդակով՝ երկրի ներսում բոլոր 3G կամ առավել առաջընթաց շարժական կապի ցանցերի համար: Ներբեռնման և վերբեռնման հոսքերը պետք է գումարվեն իրար և ներկայացվեն միասին: Հոսքը պետք է չափվի վերջնական օգտագործողի հասանելիության կետում: Մեծածախ և «պատված այգու» հոսքերը պետք է բացառվեն: Հոսքը պետք է ներկայացվի էկզաբիթերով:	0.03	0.034	0.04	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)

N	ՀՄՄ-ի կոդ	Ցուցանիշ	Սահմանում	2013	2014	2015	Տրամադրման և հրապարակման պատասխանատու մարմին
47.	136mwo	Շարժական լայնաշերտ ինտերնետ կապի հոսքը (երկրից դուրս, ռոմինգ դրսում)	Շարժական լայնաշերտ ինտերնետ կապի հոսքը (երկրից դուրս, ռոմինգ դրսում) նշանակում է լայնաշերտ կապի հոսքի ծավալները, որոնք սկզբնավորվում են երկրից դուրս 3G ցանցերից կամ այլ առավել առաջընթաց շարժական կապի ցանցերից՝ ներառյալ 3G վերազինումը, էվոլյուցիաները կամ հավասարազոր չափանիշները՝ տվյալների փոխանցման արագությունների տեսանկյունից: Հոսքը պետք է հավաքագրվի և ամփոփվի երկրի մակարդակով՝ երկրից դուրս ռոմինգի մեջ գտնվող և 3G կամ առավել առաջընթաց շարժական կապի ցանցերից օգտվող ներքին օպերատորների բոլոր հաճախորդների համար: Ներբեռնման և վերբեռնման հոսքերը պետք է գումարվեն իրար և ներկայացվեն միասին: Հոսքը պետք է չափվի վերջնական օգտագործողի հասանելիության կետում: Մեծածախ և «պատված այգու» հոսքերը պետք է բացառվեն: Հոսքը պետք է ներկայացվի էկզաբիթերով:	0.000000 31	0.000000 82	0.0000012	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)
10. Եկամուտ							
48.	75	Բոլոր հեռահաղորդակցական ծառայություններից ստացված եկամուտը	Բոլոր հեռահաղորդակցական ծառայություններից ստացված եկամուտը նշանակում է այն եկամուտը, որը ստացվել է ֆիքսված հեռախոսակապից, շարժական բջջային կապից, ինտերնետի և տվյալների փոխանակման ծառայություններից, որոնք առաջարկվում են հեռահաղորդակցության օպերատորների կողմից (ցանցային և վիրտուալ՝ ներառյալ վերավաճառողները), որոնք ծառայություններ են առաջարկում երկրի ներսում քննարկվող ֆինանսական տարվա ընթացքում: Այն ներառում է հեռուստատեսային ազդանշանների հեռարձակումից ստացված մանրածախ եկամուտները, սակայն բացառում է հեռուստատեսության բովանդակության ստեղծման եկամուտները: Տվյալները պետք է բացառեն (i) մեծածախ եկամուտները (օրինակ՝ դադարեցման վճարները), (ii) սարքի վաճառքից կա վարձակալությունից ստացված եկամուտները, (iii) ԱԱՀ և ակցիզային հարկերը: Ցանակացած շեղում սահմանումից պետք է մանրամասնվի նշման մեջ՝ ներառյալ բացատրությունները, թե որ հեռուստատեսային եկամուտներն են ներառված/բացառված (օրինակ՝ ԱկՓԻԹԿԻ (IPTV), կաբելային հեռուստատեսություն, վճարովի արբանյակային և օդում ազատ հեռուստատեսություն):	168 453 000 000	158 719 609 000	151 106 250 782	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)

N	ՀՄՄ-ի կոդ	Ցուցանիշ	Սահմանում	2013	2014	2015	Տրամադրման և հրապարակման պատասխանատու մարմին
49.	741	Շարժական կապի ծառայություններից ստացված եկամուտը	<p>Շարժական կապի ծառայություններից ստացված եկամուտը նշանակում է շարժական բջջային հաղորդակցության ծառայությունների պահպանումից ստացված մանրածախ եկամուտն է՝ ներառյալ բոլոր ձայնային, էսէմէս (SMS) և տվյալների (ներշերտ և լայնաշերտ) ծառայությունները, որոնք առաջարկվում են քննարկվող ֆինանսական տարվա ընթացքում երկրի ներսում ծառայություններ առաջարկող շարժական կապի օպերատորների կողմից: Ավելացված արժեքով ծառայություններից (օրինակ՝ պրեմիում SMS) պետք է ներառվի: Ներկայացվող տվյալները պետք է բացառեն (i) մեծածախ եկամուտները, (ii) սարքի վաճառքից կա վարձակալությունից ստացված եկամուտները, (iii) ԱԱՀ և ակցիզային հարկերը:</p>	125 776 000 000	118 832 626 000	100 255 864 440	«Հ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)»
11.Ներդրում							
50.	81	Հեռահաղորդակցության ծառայություններում տարեկան ներդրումը	<p>Հեռահաղորդակցության ծառայություններում տարեկան ներդրումը նշանակում է ֆինանսական տարվա ընթացքում ներդրում, որը ստացվում է հեռահաղորդակցության ցանցերի կապի և/կամ ֆիքսված ակտիվների ձեռքբերման կամ վերազինման (ներառյալ ֆիքսված, շարժական և ինտերնետ կապի ծառայությունները, ինչպես նաև հեռուստատեսային ազդանշանների հեռարձակումը) ծառայություններից (սովորաբար CAPEX)՝ ավելի քիչ ֆիքսված ակտիվների ոչնչացման ապաներդրումային պարտավորությունը: Ֆիքսված ակտիվները պետք է ներառեն շոշափելի ակտիվներ, ինչպիսիք են շինությունները և ցանցերը, և ոչ շոշափելի ակտիվներ, ինչպիսիք են համակարգչի ծրագրային ապահովումը և մտավոր սեփականությունը: Սահմանումը մեծապես համապատասխանում է համախառն ֆիքսված կապիտալի ձևավորման բովանդակության հետ, ինչպես սահմանված է 2008թ. Ազգային հաշվեհամարների համակարգում: Ցուցանիշը ներդրման չափումն է, որը կատարվել է երկրի ներսում հեռահաղորդակցության ցանցեր և/կամ ծառայություններ տրամադրող մարմինների կողմից, և ներառում է նախնական տեղադրումների և արդեն գոյություն ունեցող տեղադրումներին կատարվող հավելումների ծախսերը, որոնց օգտագործումն ակնկալվում է ընդլայնված ժամանակահատվածի համար: Այն բացառում է շահագործման լիցենզաների վճարի և ռադիոտիրույթների օգտագործման համար ծախսերը:</p>	35 520 000 000	35 123 000 000	34 620 072 824	«Հ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)»

N	ՀՄՄ-ի կոդ	Ցուցանիշ	Սահմանում	2013	2014	2015	Տրամադրման և հրապարակման պատասխանատու մարմին
51.	841f	Հեռահաղորդակցություններում արտասահմանյան տարեկան ներդրումը	Հեռահաղորդակցություններում արտասահմանյան տարեկան ներդրումը նշանակում է հեռահաղորդակցության ծառայություններում ֆինանսական տարվա ընթացքում ներդրումը (ներառյալ ֆիքսված, շարժական և ինտերնետ կապի ծառայությունները), որը գալիս է արտասահմանյան աղբյուրներից, կոչվում է նաև արտասահմանյան ուղղակի ներդրում ԷՖԴԻԱյ (FDI):	7 663 000 000	6 325 000 000	7 667 616 426	«Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)»
12. Աշխատող անձնակազմ							
52.	51	Լրիվ հավասարազորով անձնակազմ հաստիքի աշխատող	Լրիվ հաստիքի հավասարազորով աշխատող անձնակազմ նշանակում է հեռահաղորդակցության օպերատորների կողմից աշխատանքի լրիվ դրույքի հավասարազորով ԷՖԹԻԻ (FTE) վարձված աշխատողների ընդհանուր թիվը՝ երկրում հեռահաղորդակցության ծառայություններ մատուցելու համար՝ ներառյալ ֆիքսված հեռախոսակապի, շարժական բջջային կապի, ինտերնետի և տվյալների փոխանցման ծառայությունները: Այս ցուցանիշը բացառում է աշխատակազմի աշխատանքները հեռարձակման բիզնեսներում, որոնք առաջարկում են միայն ավանդական հեռարձակման ծառայություններ: Մասնակի դրույքով աշխատող աշխատակազմը պետք է արտահայտված լինի լրիվ դրույքով աշխատող աշխատակազմի հավասարազորով ԷՖԹԻԻ (FTE):	5 470	5 605	5 760	«Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)»
53.	51f	Բոլոր հեռահաղորդակցության օպերատորների կողմից վարձված անձնակազմ, կանայք	Նշանակում է հեռահաղորդակցության օպերատորների կողմից աշխատանքի լրիվ դրույքի հավասարազորով (FTE) վարձված կանանց ընդհանուր թիվը՝ երկրում հեռահաղորդակցության ծառայություններ մատուցելու համար՝ ներառյալ ֆիքսված, շարժական և ինտերնետ կապի ծառայությունները: Այս ցուցանիշը բացառում է աշխատակազմի աշխատանքները հեռարձակման բիզնեսներում, որոնք առաջարկում են միայն ավանդական հեռարձակման ծառայություններ:	1 961	2 310	2 381	«Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)»
13. Վճարովի հեռուստատեսություն							
54.	965IP	ԱյՓԻԹԻՎԻ (IPTV) բաժանորդագրությունները	ԱյՓԻԹԻՎԻ (IPTV) բաժանորդագրությունները նշանակում է ինտերնետ արձանագրությամբ հեռուստատեսության ԱյՓԻԹԻՎԻ (IPTV) բաժանորդագրությունների թիվը, այսինքն՝ հեռուստատեսությունը IP-ի վրա հիմնված ցանցի միջոցով, որը կառավարվում է ծառայության որակի, փորձի որակի, անվտանգության, փոխգործակցության և հուսալիության պահանջվող մակարդակն ապահովելու համար: Սա չի ներառում հանրային ինտերնետի միջոցով ստացվող տեսաձայնագրությունը, օրինակ՝ հեռարձակման հոսքը, և բաժանորդագրությունները բարձրաստիճան տեսալսողական բովանդակություն տրամադրողներին:	45 000	59 200	61 900	«ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ)» «ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով (համաձայնությամբ)»

N	ՀՄՄ-ի կոդ	Ցուցանիշ	Սահմանում	2013	2014	2015	Տրամադրման և հրապարակման պատասխանատու մարմին
55.	965s	Արբանյակային հեռուստատեսության բաժանորդագրությունները (հավաքագրված է արբանյակային ափսեների թիվը)	Արբանյակային հեռուստատեսության բաժանորդագրությունները նշանակում է վճարովի ուղիղ դեպի տուն ԴիԹԻԷջ (DTH) արբանյակային բաժանորդագրությունների թիվը, այսինքն՝ արբանյակային ափսեի միջոցով ստացվող վճարովի հեռուստատեսությունը, որը կարող է ստանալ արբանյակային հեռուստատեսության հեռարձակումներ: Սա չի ներառում եթերում ազատ արբանյակային հեռուստատեսությունը:	70 000	76 000	77 300	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
56.	965cab	Կաբելային հեռուստատեսության բաժանորդագրությունները	Կաբելային հեռուստատեսության բաժանորդագրությունները նշանակում է բազմալիքային հեռուստատեսության ծրագրերի հեռարձակում, որոնք տրամադրվում են միառանցքային կաբելային ցանցերի շնորհիվ: Այն ներառում է անալոգային և թվային կաբելային հեռուստատեսության բաժանորդագրությունները: Եթե հասանելի է անալոգային/թվային կաբելային հեռուստատեսության բաժանորդագրությունների բաժանում, կաբելային հեռուստատեսության բաժանորդագրությունների յուրաքանչյուր տեսակի վերաբերյալ տվյալները պետք է մանրամասնվեն նշումով: Այն բացառում է ԱյՓԻԹԻՎի (IPTV)՝ տրամադրված կաբելային հեռուստատեսության ցանցերի միջոցով:	25 200	26 900	27 200	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությանը) ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով (համաձայնությանը)
57.	965oth	Այլ հեռուստատեսային բաժանորդագրություններ	Այլ հեռուստատեսային բաժանորդագրություններ նշանակում է վճարովի հեռուստատեսության բաժանորդագրություններ՝ ԱյՓԻԹԻՎի (IPTV)-ից, արբանյակային հեռուստատեսությունից և կաբելային հեռուստատեսությունից տարբեր: Սա ներառում է բաժանորդագրություններ հեռուստատեսային պլատֆորմերի, ինչպիսիք են միկրոալիքային, բազմակետային բաշխման համակարգերը (MMDS) և վճարովի թվային ցամաքային հեռուստատեսությունը (վճարովի DTT): Օդում ազատ հեռուստատեսությունը չպետք է ներառվի: Ներկայացված տվյալներին համապատասխանող հեռուստատեսային պլատֆորմերը պետք է նշվեն նշման մեջ:	Նման ծառայություն չի մատուցվում	Նման ծառայություն չի մատուցվում	Նման ծառայություն չի մատուցվում	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն